

‘³ ԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՅԱՅՆՈՒՅՆ ԻՐԱՎՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅՆ, 2005

Այս հրատարակության պատվիրատուն է
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը
(Media Diversity Institute)

Գրքի հայերեն հրատարակությանն առնչվող
ցանկացած հարցով դիմել՝

Media Diversity Institute,
100 Park Village East, London NW1 3SR, UK
Tel: +44 207 38 00 200
Fax: +44 207 38 00 050
Email: info@media-diversity.org
Website: www.media-diversity.org

Բազմակողմանի տեղեկատվություն.
հայկական ՁԼՍ-ների գործունեության
իրավական հիմքերը

Տեղեկատվության բազմակողմանիությանն
առնչվող հայկական եւ միջազգային օրենսդրական
դրույթներ ու վարքականուններ

Հեղինակ՝ Մեսրոպ Հարությունյան (Բազմակողմանի
տեղեկատվության ինստիտուտի պատվերով)



Այս հրատարակությունն իրականացվել է Եվրոպա-
կան Համայնքի եւ Նիդեռլանդների արտաքին գոր-
ծերի նախարարության ֆինանսական օժանդակու-
թյամբ: Այստեղ արտահայտված տեսակետները
պատկանում են Բազմակողմանի տեղեկատվու-
թյան ինստիտուտին եւ որևէ դեպքում չեն կարող
Եվրոպական Համայնքի կամ Նիդեռլանդների ար-
տաքին գործերի նախարարության պաշտոնական
կարծիք դիտարկվել:

‘³ ½³ ī áðÙ³ YÇ
ī »Ó»Í³ ii áðAð.
ÑB Ù³ ī³ Y ½~~E~~³ Y»ñC
· áñi áð»áðAÙ³ Y
Qñ i³ ī³ Y ÑQðU»ñA

Í »Ó»Í³ ii áðAÙ³ Y
μ³ ½³ ī ÁðÙ³ YÇáðAÙ³ YY
3 éYáí áÓ Ñ³ Ù³ ī³ Y »Ó
ÙQç³ ½³ QçY ûñ Yé¹ ñ³ ī³ Y
1 ñðAÙ³ Y»ñáði³ ñ³ ī³ YáYY»ñ

ÉaÝi aÝ, 2005

Ðñ i³ ñ³ Í i »E³ ½³ ½³ ī ÁðÙ³ YÇ
i »Ó»Í³ ii áðAÙ³ Y Çéi QiaðC»ó
ÙQç¹ »éB³ Y¹ Y»ñC³ ñ³ QçY · áñi »ñC
Y³ E³ ñ³ ñðAÙ³ Y yçY³ Yé³ ī³ Y
úA³ Y¹ 3 ī ÁðAÙ³ Úp

‘áí 3 Yí 3 TáðAðý

6 _____ ²é³ ç³ µ³ Y

8 _____ Æððù

10 _____ I. é³ NÙ³ Y³ ¹ñ ³ Y Ýáñ»ñ

14 _____ II. ØCç³ ½ ³ lÇY á ³ Ü³ Y³ . ññ

24 _____ III. Ð³ Û ³ Y Ç Ð³ Yñ á »iáðAÛ Y
ññ Yë¹ ñðAñð

28 _____ IV. ³Äç³ ³ lÇí ³ nñ ³ YáYY»ñ
(ÇÝÜ³ ³ ñ ³ í áñð)

34 _____ ²Ù÷ á÷ áðU

36 _____ ø³ Æ ³ l Ü»ñ YñðAñð Ü»çmu»ñ ³ |
ññ YÜ»ñçó

46 _____ ²é³ ñ ³ Û ³ Y Õ³ Y|

۱ ۳ ۱۲۳ ۱۰۴۳ ۱۵
 ۱۶۳ ۱۷۳ ۱۸۳ ۱۹۳ ۱۰۴۳ ۱۵
 ۱۶۳ ۱۷۳ ۱۸۳ ۱۹۳ ۱۰۴۳ ۱۵
 ۱۶۳ ۱۷۳ ۱۸۳ ۱۹۳ ۱۰۴۳ ۱۵

ī »ō» ī³ ii áðð ð Y
 þ³ ½ ð³ ī áðð³ Y cáðð ð YY
 3 e ð ð ii að ñ³ ð³ ī³ Y »o
 ð c³ ½³ ½ ð³ ð Y e i ð³ Y
 1 r að ð Y ñ a ð i³ ð³ ī³ Y a Y Y »ñ

$e^3 \zeta^3 \mu^3 Y$

ազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը պատրաստ է համագործակցել ծեր երկրի լրագրողների ու խմբագիրների հետ՝ խթանելու համար տարբեր փոքրամասնություններին ու խցելի խմբերին առնչվող իիմնահարցերի լուսաբանումը:

Ամեն օր Հայաստանի լրագրողներին ու խմբագիրներին հարկ է լինում որոշում կայացնել նման կարգի տեղեկատվություն տրամադրել-չտրամադրելու շուրջ: Ասենք, օրինակ, որքանո՞վ է արդարացված կամ օրենքի տեսակետից ընդունելի հանցագործի ցեղային պատկանելության, հարցազրույցի հերոսի ազգության եւ կամ քաղաքական գործչի սեռական կողմնորոշման հիշատակումը:

Հասարակության խցելի խմբերի լուսաբանումն ունի եւ բարոյական, եւ իրավական կողմն: Այս գորույկը քննարկում է հարցի իրավական կողմը:

Ինչպե՞ս են այս խնդիրներն արտացոլված Հայաստանի սահմանադրության մեջ: Որքանո՞վ են այդ թեմաներին անդրադառնում Հայաստանի մյուս օրենքները կամ միջազգային այն նորմերը, որոնց Հայաստանը հանձն է առել հետեւել: Ինչպե՞ս է այս ամենին վերաբերում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Իմանաք այս օրենքները թե ոչ՝ իրականության մեջ դրանք որոշակիորեն սահմանափակում են ծեր գործունեությունը: Բայց եւ անժխտելի է այն փաստը, որ լրագրողի բազմազբաղ աշխատանքային առօրյան սովորաբար ժամանակ չի թողնում թերթելու օրենքների ստվար էջերը՝ ինչ-ինչ մանրամասներ պարզելու համար: Այդ է պատճառը, որ Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտն առաջարկել է Երեւանի մամուլի ակումբի փորձագետ Մեսրոպ Շարությունյանին՝ կատարել այդ աշխատանքը:

Նա առանձնացրել է Հայաստանի օրենքների, վարժականների այն իիմնական հատվածները, որոնք այս կամ այն կերպ անդրադառնում են լրագրողների եւ խմբագիրների՝ խցելի խմբերի լուսաբանման առնչվող գործունեության վրա: Անդրադարձ է արվել նաև միջազգային որոշ օրենքների ու համաձայնագրերի, որոնք Հայաստանը վավերացրել է կամ որոնց համաձայնել է միանալ:

Հուսանք, որ գիրքը օգտակար կլինի ծեզ համար:

Միլիցա Պեշիչ
Բազմակողմանի տեղեկատվության
ինստիտուտի տնօրեն

Øáðù

Օ ամկացած երկրում տեղեկատվության եւ արտահայտվելու ազատության (այդ թվում հասարակության այս կամ այն խմբի կամ խավի վերաբերյալ կամ նրա կողմից) ցանկացած սահմանափակում կարող է ընդունելի համարվել միայն այն դեպքում, եթե դա (ըստ Եվրոպական կոնվենցիայի) սահմանված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակության մեջ այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար: Այսինքն նախապայմանը օրենքով սահմանված լինելով է եւ այլոց (այդ թվում հասկանալի է, փոքրամասնությունների) իրավունքները հարգելը: Սա նկատի ունենալով՝ երկրների (նաեւ Հայաստանի) օրենքները շատ սահմանափակումներ չեն կարող նախատեսել, քանի որ դա անմիջապես կիանգեցներ գրաքննության կամ տեղեկատվության ու արտահայտվելու ազատության իրավունքի դեմ ոտնձգությունների:

Այս իմաստով առավել ընդգրկուն սահմանափակումներ կարող են սահմանվել ինքնակարգավորման մեխանիզմներով, իսկ ավելի պարզ ասած՝ լրագրողական էթիկայի կանոններով: Հայտնի է, որ էթիկական կանոնագրերը երբեմն ավելի խիստ պարտավորություններ են նախատեսում, քան անգամ օրենքները, ընդումին պարտավորությունները լրագրողները կամավոր են վերցնում իրենց վրա եւ, բնականաբար, ավելի են հակված հետեւելու դրամ:

Սույն հետազոտության նպատակն է եղել՝ պարզել, թե Հայաստանում զանազան փոքրամասնությունների եւ խոցելի խմբերի վերաբերյալ տեղեկություններ հայրենին ՁԼՍ-ներն օրենքով նախատեսված ի՞նչ սահմանափակումներ ունեն, ի՞նչ կամավոր պարտավորություններ են իրենց վրա վերցրել լրագրողներն էթիկական կանոնագրերով, եւ ի՞նչ է նախատեսված միջազգային փաստաթղթերով: Որոշ անդրադարձ կլինի նաեւ այլ երկրների օրենսդրությանն ու ինքնակարգավորմանը:

Վերլուծությունը բաժանված է մի քանի մասերի.

1. Սահմանադրական նորմեր
2. Միջազգային փաստաթղթեր, որոնց միացել է Հայաստանը
3. Հայաստանի Հանրապետության օրենքներ
4. Էթիկայի վարքականութեր (ինքնակարգավորում):

I. የኢትዮጵያ ንግድ ሚኒስቴር
የአዲስአበባ

Դայաստանի Հանրապետության սահմանադրությունը ընդունվել է 1995 թվականին: Ինչպես այլ երկրներում, մեր երկրի Սահմանադրությունն էլ տալիս է մարդու եւ քաղաքացու իշխանական իրավունքը և ազատությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիները, անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները եւ պարտականությունները»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Բոլորը հավասար են օրենքի առջեւ եւ առանց խտրականության հավասարապես պաշտպանվուն են օրենքով»:

Այս երկու հոդվածներից, բնականաբար, բխում է, որ քաղաքացիները, առանց խտրականության, օգտվում են միեւնույն իրավունքներից եւ ունեն միեւնույն պարտավորությունները:

Դիտարկենք Սահմանադրության մի քանի հոդվածներ, որոնք այս կամ այն կերպ կարող են առնչվել եւ տեղեկատվության ազատությանը կամ սահմանափակումներին, եւ որոշակի խնդերի իրավունքներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Յուրաքանչյուր ոք ունի իր ընտանեկան եւ անձնական կյանքը անօրինական միջամտությունից, իր պատիվը եւ բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք»:

Արգելվում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի մասին տեղեկությունների ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը եւ տարածելը»:

Ինչո՞ւ ենք այս հոդվածը մեջբերում: Շնորհ այն է, որ անձնական կյանքի բաղկացուցիչ են համարվում նաեւ մարդու կողմնորոշումները, ինչը կարող է նրան այս կամ այն խնդիրն դասել: Յետեւարար՝ նրա անձնական կյանքի այդ կողմին անդրադառնալը (ինչպես հետագայում կտեսնենք՝ լրագրողական էթիկայի տարբեր կանոնագրեր Ծովական անհարկի անդրադառնալը) կարող է դիտվել միջամտություն մարդու անձնական կյանքին, իսկ դա արգելված է արդեն Սահմանադրությամբ:

Ե³ ՆՄՅ Կ³ 1 թմԱՄ Կ 23 ՆԱ¹ Ի Հ Ա Ի »Ր մ»ՐԱՋ Հ
Ե ՕԽԸ³ 1/2 Ի ԱՄԱՄ ԿԱ 2 Մ Ե³ ՆՄՅ ԿԱՋ Հ^a

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ դավա-
նանքի ազատության իրավունք: Կրոնի եւ համոզ-
մունքների արտահայտնան ազատությունը կարող է
սահմանափակվել միայն օրենքով՝ Սահմանադրու-
թյան 45 հոդվածում նախատեսված հիմքերով»:

Ե³ ՆՄՅ Կ³ 1 թմԱՄ Կ 24 ՆԱ¹ Ի Հ Ա Յ Վ Ա Շ Ա Մ Ա Մ Ա Վ
Ի »Ր մ»ՐԱՋ Լ Ի Ո Յ »Ր Ը »Ծ »Ծ Ե Ի Ա Մ Ա Մ Ա Վ
3 Կ 2 Ի Ա Մ Ա Մ Ա Վ Կ Ա

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքը պնդելու
իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել՝ իրա-
ժարվել իր կարծիքից կամ փոխել այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության
իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղա-
փարմեր փնտրելու, ստանալու, տարածելու ազա-
տությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝
անկախ պետական սահմաններից»:

Վերջին երկուսը, ըստ եռթյան, այն հիմնարար
դրույթներն են, որոնց վրա հենվելով՝ պիտի կատա-
րենք մեր հետագա վերլուծությունը: Բանն այն է, որ
Սահմանադրությունն այս հոդվածներով երաշխա-
վորում է խղճի ու դավանանքի եւ խոսքի ազատու-
թյան իրավունքները, որոնք ըստ

Ե³ ՆՄՅ Կ³ 1 թմԱՄ Կ 44 ՆԱ¹ Ի Հ Ա

«Կարող են սահմանափակվել միայն օրենքով՝
եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակա-
կան անվտանգության, հասարակական կարգի,
հանրության առողջության եւ բարքերի, այլոց իրա-
վունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի
համբավի պաշտպանության համար»:

Այսինքն, Սահմանադրությունն արդեն նախատե-
սում է, որ, ասենք, այս կամ այն դավանանքի քարո-
զումը կարող է որեւէ օրենքով սահմանափակվել,
եթե այն սպառնում է, ասենք, այլոց իրավունքներին
ու ազատություններին կամ անհրաժեշտ է այլոց
պատվի եւ բարի համբավի պաշտպանության հա-
մար: Նման սահմանափակումը լիովին համապա-
տասխանում է միջազգային իրավունքի նորմերին: Մասնավորապես «Մարդու իրավունքների եւ հիմ-
նարար ազատությունների պաշտպանության նա-
սին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի
երկրորդ մասը նույնականացնելու սահմանափա-
կումների հնարավորություն է տալիս կոնվենցիան
ստորագրած պետություններին: Կա երկու պայման,
որ նախատեսված է եւ կոնվենցիայով, եւ ՀՀ սահ-

մանադրությամբ. ա) սահմանափակումը պետք է նախատեսված լինի օրենքով, բ) այն պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, պետական, հասարակական եւ այլոց շահերի պաշտպանության համար (Կոնվենցիայի 10-րդ հոդվածն ամբողջությամբ կներկայացնենք ստորև):

Մեր ուսումնասիրության թեմային անդրադառնալով՝ ասենք, որ Սահմանադրությունը, ըստ եռարյան, չի նախատեսում եւ չէր էլ կարող նախատեսել որեւէ սահմանափակում (բացի վերը նշված դեպքերից) այս կամ այն փոքրամասնությամբ, սոցիալական կամ խոցելի խմբերին վերաբերող տեղեկություններ հավաքելու եւ տարածելու ինաստով:

ՈՅ» ՅՆԵՅՅ ՆՎՅ ՅՅ 1 ԹԱՅՅՅ Յ » Փ ԱՅ ՆԵՅ 1 Յ 3 1 ,
ԱՐ 1 Յ 3 ԹՈՅ Յ 3 Ե ՅԱԱԱԱՅ ԱՇ » ՅՅ ԷԱ » ԱՅ Փ Ն » :
Ե ԱՅԱԵՅՅ ՆՎՅ ՅՅ 1 ԹԱՅՅ Յ Յ ՆԵՅ 1 Յ 3 1 Չ ԱՅ Յ Յ Յ :

«Ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի եւ մշակույթի զարգացման իրավունք»:

Եթե սրան ավելացնենք նաև, ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության դեպքերում սոցիալական ապահովության իրավունքի սահմանումը 33 հոդվածով, ապա, կարծեն, բոլոր տեսակի խմբերի իրավունքները ներառնված են Սահմանադրության մեջ: Սակայն, ինչպես նշեցինք, մեր վերլուծության համար հիմք են լինելու 24 եւ 44 հոդվածները, որոնցից առաջինը վերաբերում է խոսքի ազատությանը, երկրորդը՝ դրա հնարավոր սահմանափակումներին:

II. ØØç³ ½³ ØY
å³ Ø³ Ý³ . ññ

2 Ήη, ηήσταρκένερ πήχωαργάχιν ήρωαψιλαρθή μή βωνής ηροιυρθέτηρ, ηήης ήετην, κυτεύανενέρ, αρηγήν^ο ήωαματωνάν ορθένερθέτηρ θαβασατηνεύετη ένα υαδιναναψιακούιανέτηρ^ο αյυ λαών αγήν ιανθήτηρ αωνηζοιτρωαρθήτηρ τεθητεκοπτρηγιανέτηρ ήωαψιρθέτηρ έτι ταωαραθέτηρ πετρωαρθερωαλ:

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ եւ իրավունքներով։ Նրանք օժտված են բանականությամբ ու խնդով եւ պարտավոր են միջնաց վերաբերվել եղայրության ոգով։

Üád̄ Ý ÷ 3 ēi 3 ÄÖÄÇ 2 Ñá 1 í 3 í Á

Դարձյալ կրկնենք. այս երկու հոդվածների դրույթները բնականաբար վերաբերում են նաև տեղեկատվության ազատության ու բազմազանությանը: Յետեւարար, մեր վերուծության համար կարեւոր է տեսնել, թե ինչ է ասում այդ առթիվ հօչքակագիրը:

Đéā³ Ī³ . r̄Ç19Ñá¹í³ í Á

«Յուրաքանչյուր ոք ունի կարծիքի եւ դրանք արտահպատելու ազատություն. այս իրավունքը ներառում է կարծիքներն առանց միջամտության ունենալու, անկախ պետական սահմաններից տեղեկատվություն ու գաղափարներ փնտրելու, լրատվության ցանկացած միջոցով ստանալու եւ տարածելու ազատությունը»:

Ի դեպ, Նեա³ լ³ . բ³ 18 Ան¹ լ³ կ³ Ա անդրադաշտում է մտքի, խղճի ու կրոնի ազատությանը, որն անմիջականորեն առնչվում է մեր թեմային, ուստի մեջքերենք նաև այդ հոդվածը.

«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խոջի ու կրոնի ազատության իրավունքը. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզնունքը փոխելու ազատությունը»:

* Մարդու իրավունքների համընդիմանուր հշչակագրից՝ բոլոր մեջ՝ թերությունները կստարված են ըստ հայերեն պաշտոնական բարգմանության, տես՝ «Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցության միջազգային պահանջառություն», պաշտոնական հայերեն բարգմանություն, փաստաթրթերի դղոսպածու, Գիրու Ա. Ենթեան-2001:

թյուն եւ միամձնյա կամ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով իր կրոնը կամ համոզմունքը քարոզելու, արարողությունների, պաշտամունքի եւ ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն»:

Քանի որ միջազգային փաստաթղթերի դրույթները լայնորեն հայտնի են արդեն ոչ միայն աշխարհում, այլև Հայաստանում, ուստի մենք երկար կանգ չենք առնի դրանց վրա, քանի որ առավել կարեւոր է դիտարկել Հայաստանի՝ Սահմանադրությունից ու միջազգային փաստաթղթերից բխող օրենքներն ու դրանցում առկա սահմանափակումները։ Սակայն մինչ այդ, այսուհանդերձ, պետք է անպայման դիտարկենք «Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիամ*։

ՏՅ¹Ի³ / Զ Զ Ա Վ Ը Ծ »Ծ Ր Ա Յ Ց³ Ղ Յ Շ Ա Ռ Ա Մ Ծ

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը եւ դրանք ինչպես միամձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզության, արարողությունների, պաշտամունքի եւ ծեսերի միջոցով արտահայտելու ազատությունը։

ՏՅ¹Ի³ / 10 Հ Պ³ Ա Վ »Բ Ա Ծ Օ Ծ³ Ղ Յ Շ Ա Ռ Ա Մ Ծ

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատութեն արտահայտվելու իրավունք։ Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից։ Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում։

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ծեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում իշխանության ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգու-

* «Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայից բոլոր մեջբերումները կատարված են ըստ հայերեն պաշտոնական թարգմանության, տես՝ «Սարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր», պաշտոնական հայերեն բազմանություն, փաստաթղթերի ժողովածու, Գիրք Ա, Երեւան–2001։

թյունները կամ հանցագործությունները կամխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես եւ այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմանվ ստացված տեղեկատվության բացահայտումը կամխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անձառարությունը պահպանելու նպատակվ»:

Մենք ամբողջությամբ ենք մեջքերում Կոնվենցիայի այս հոդվածը, որովհետեւ միջազգային փաստաթղթերից սա լավագույնս է ծեւակերպել արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքը ու դրա հնարավոր սահմանափակումները: Եվ ինչպես արդեն ասացինք Վերեւում, այն նշում է սահմանափակումների պայմանները. ա) սահմանափակումը պետք է նախատեսված լինի օրենքով, բ) այն պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, պետական, հասարակական եւ այլոց շահերի պաշտպանության հաճար:

Եվ Վերջապես Կոնվենցիայի 14-րդ հոդվածը արգելում է խտրականությունը.

SDá1í 3 í 14 iñ ī 3 Yáññ ñ »Éññ

Սույն Կոնվենժիայում շարադրված իրավունքներից են ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խորականության, այն է՝ անձակս սերից, ռասայից, ճաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզնությունից, ազգային կամ սոցիալական ծագությունից, ազգային փորբանասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրություննից»:

Եվրոպական կոնվենցիայի դրույթների Ներկայացումն ամբողջական չի լինի, եթե մենք չանդրադառնանք Եվրոպայի որիրի նախարարների կոնֆերանտի հանձնարարականներին, դրույթ անմիջականութեն բխում են Կոնվենցիայից: ճիշտ է, հանձնարարականները իմպերատիվ բնույթ չունեն, այլ ավելի շատ երաշխավորություններ են, թե ե անդամ պետություններն ինչը եւ ինչպես պետք է կարգավորեն ներքին օրենսդրության մեջ, այսուհանդերձ այդ երաշխավորությունները հաշվի առնելը ներքին օրենքները դարձնում է ավելի ժողովրդավարական եւ միջազգային օրենքի համընդիմանուր նորմերին հաճապատասխան:

Մենք անդադառնալու ենք երկու հանձնարարականների, որոնք ամբողջությանք վերաբերում են մեր վերլուծության առարկային*:

* Եվրոպայի որիրող մասնաբաների կոմիտեի հաճանարարականներից հայերն են նշեցրության կատարվության մասին Եվրոպական համագույն հրատարակած «Զանգանակածային տեխնիկակության բնագավառը Եվրոպայի որիրող փաստաթերթություն» ժողովածուի (Երկրորդ լրացման հրատարակություն), Երևան-2003:

Առաջինը Եվրոպայի որիրդի նախարարների կոմիտեի «Ատելություն արտահայտող խոսքի վերաբերյալ» R (97) 20 հանձնարարականն է, որն ընդունվել է 1997 թվականի հոկտեմբերի 30-ին:

Ըստ հանձնարարականի՝

«Ատելություն արտահայտող խոսք» ձեւակերպման տակ պետք է հասկանալ բոլոր այն արտահայտությունները, որոնք տարածում, հրահրում եւ արդարացնում են ռասայական ատելություն, քսենոֆորիա, հակասեմիտիզմ եւ անհանդուրժողականության բոլոր այլ ձեւերը, ինչպիսիք են ազդեսիվ ազգայնականության եւ երնոցենտրիզմի միջոցով արտահայտվող անհանդուրժողականությունը, խորականությունը փոքրամասնությունների եւ միգրանտների համեմատությունը»:

Այսուհանդերձ, Հանձնարարականը, ինչպես կտեսնենք նրանից կատարված մեջքերումներից, առաջնությունը տալիս է արտահայտվելու ազատության սկզբունքին, նշելով, որ ամեն դեպում դա պաշտպանված է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով, եւ ցանկացած սահմանափակում պետք է կատարվի միայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասում նախատեսված պայմաններից ելնելով:

Սիա Հանձնարարականի մի քանի սկզբունքներ.

ԵՇ ԿՐԱՅՆ1

Անդամ պետությունների կառավարությունները, հասարակական իշխանություններն ու ազգային, ռեզիոնալ եւ տեղական կառավարման մարմինները պարտավոր են ձեռնպահ մնալ հատկապես մամուլով տարածվող այնպիսի ելույթներից, որոնք կարող են ընկալվել որպես ատելության արտահայտություն, կամ ռասայական ատելության, քսենոֆորիայի, հակասեմիտիզմի եւ անհանդուրժողականության այլ ձեւերի արդարացման, տարածման կամ քաջալերման ներգործություն ունենալ: Նման ելույթները պետք է կանխվեն կամ հրապարակայնորեն հերքվեն:

ԵՇ ԿՐԱՅՆ2

Անդամ պետությունների կառավարությունները պետք է ստեղծեն քաղաքացիական, քրեական օրենքներով նախատեսված իրավական դաշտ, որը իշխանությանը եւ իրավապահ մարմիններին հնարավորություն կընձեռի պաշտպանել արտահայտվելու ազատությունը եւ անհատների իրավունքները: Մրանից ելնելով՝ անդամ պետությունների կառավարությունները պետք է ուղիմեր ու միջոցներ գտնեն՝

- Խթամելու եւ համակարգելու առկա օրենսդրության եւ օրենսդրական պրակտիկայի հետազոտությունները,
- Վերանայելու առկա իրավական շրջանակները՝ երաշխավորելով, որ դրանք համապատասխանում են նոր լրատվամիջոցներին եւ հաղորդակցական ժառայություններին ու ցանցերին,
- մշակելու համակարգված դատաիրավական քաղաքականություն՝ հիմնված այս հանձնարարականում տրված սկզբունքների վրա,
- հնարավոր պատժածեւերին ավելացնելու նաև հասարակական ժառայության պահանջները,
- հնարավորություններ ստեղծելու ատելություն արտահայտող խոսքի դեմ պայքարելու՝ քաղաքացիական օրենսդրության միջոցով, օրինակ՝ ոչ կառավարական կազմակերպություններին թույլատրել օրենքներ մշակել, որոնք կնախատեսեն փոխառուցում ատելության զոհերի համար կամ նրանց պատասխանելու իրավունք կը նձեռնեն,
- լրատվամիջոցներին տրամադրելու տեղեկատվություն ատելություն արտահայտող խոսքի վերաբերյալ օրենքի նախատեսումների մասին:

ԵՇ ԿԱՃՆՅ

Անդամ պետությունների կառավարությունները պետք է երաշխավորեն, որ արտահայտվելու ազատությանը միջամտելու իրավական շրջանակները խիստ սահմանափակ են եւ կատարվում են օրենքի սահմաններում՝ օրյեկտիվության սկզբունքի հիմնարար պահանջ՝ արտահայտվելու ազատությանը ցանկացած միջամտություն կամ սահմանափակում պետք է ենթարկվի ամելախ արդարադատության վերահսկմանը: Սա հատկապես կարեւոր է այն դեպքերում, երբ արտահայտվելու ազատությունը պետք է գործակցվի մարդու արժանապատվությունը հարգելու եւ ուրիշների հեղինակությունը եւ իրավունքները պաշտպանելու սկզբունքի հետ:

ԵՇ ԿԱՃՆԿ

Ազգային օրենսդրությունը պետք է թույլ տա դատարաններին հաշվի առնել, որ ատելություն արտահայտող խոսքի վիրավորականության չափը սահմանված չէ ՄիԵԿ-ի 10-րդ հոդվածով: Սա այն դեպքն է, երբ ատելություն արտահայտող խոսքը նպատակառուղղված է անարգելու Կոնվենցիայում նշված ազատություններն ու իրավունքները:

ԵՇ ԿԱՃՆԾ

Ազգային օրենսդրությունը պետք է թույլատրի իրավասու դատաիրավական ատյաններին հասուլ ուշադրություն դարձնել ատելության արտահայտությունների ներառող դեպքերին: Նրանք, մասնա-

լորապես, պետք է ուշադիր լինեն կասկածայի՝ արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ, քանի որ քրեական պատժամիջոցների կիրառումը հաճախ ազատությանը միջամտելու ձեւեր է ընդունում: Ատելության խոսքի համար դատապարտվող անձանց հանդեպ քրեական պատժամիջոցների կիրառելիս իրավասու դատարանները պետք է երաշխավորեն հարգանք համամասնության սկզբունքի նկատմամբ:

ԵՇ ՆՔԱՃՆԾ

Ազգային օրենսդրությունը ատելության արտահայտությունների դեպքերում պետք է հաշվի առնի լրատվամիջոցների դերը ատելության խոսքի յուրահասուկ ձեւերը ցույց տալու, վերլուծելու եւ բացատրելու գործում: Ազգային օրենսդրությունը պետք է ծցգրտորեն տարբերակի ատելություն արտահատող խոսքի հեղինակի պատասխանատվությունը եւ լրատվամիջոցների պատասխանատվությունը, որոնք դա տարածում են՝ որպես հասարակական հետաքրքրություն ներկայացնող լրատվություն եւ գաղափարներ հաղորդելու իրենց առաքելության մի մաս:

ԵՇ ՆՔԱՃՆԾ

Ազգային օրենսդրությունը պետք է հաշվի առնի այն փաստը, որ

- ռասիզմի, քսենոֆորիայի, հակասեմիտիզմի եւ անհանդուրժողականության այլ ձեւերի մասին լրատվությունը կատարեաապես պաշտպանված է Սարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի առաջին պարբերությամբ, եւ դրան կարելի է միջամտել միայն երկրորդ պարբերությամբ նախատեսված պարագաներում,

- արտահայտվելու ազատությունը սահմանափակելու անհրաժեշտությունը որոշելիս՝ ազգային իշխանությունների կողմից կիրառվող սկզբունքները պետք է համաձայնեցվեն 10-րդ հոդվածում նշված սկզբունքների հետ, ինչպես նշված է Կոնվենցիայի կառույցների նախադասային օրենքում հաշվի առնելով լրատվության ոճը, բովանդակությունը եւ նպատակը,

- լրագրողական ազատության սկզբունքի հարցում նաև նախատեսում է, որ դատարաններն ու հասարակական իշխանությունները իրենց տեսակետները չպետք է պարտադիր լրատվամիջոցներին:

Եվրոպայի որիրոյի նախարարների կոմիտեի երկրորդ հանձնարարականը, որը մեր քննարկման թեմային է վերաբերում, R (97) 21 «Լրատվամիջոցների եւ հանդուրժողականության կուլտուրայի մասին» հանձնարարականն է, որն ընդունվել է նա-

իսարարների կոմիտեի կողմանց 1997 թվականի հոկտեմբերի 30-ին: Այն ոչ միայն հանդուրժողականությանը Վերաբերող դրույթներ է պարունակում, այլև նախատեսում է դա զարգացնել ուսուցման փուլից: «Ճանճնարարականի՝ կուլտուրայի զարգացմանը նպաստող գործնական միջոցառումներ» բաժնի առաջին իսկ դրույթը ասում է:

- լրատվամիջոցների ներգրավմանը բազմաթիվիկ, բազմամշակութային հասարակությունների կյանքում,
 - այն ավանդին, որ կարող են ունենալ լրատվամիջոցները տարրեր էթնիկ, մշակութային եւ կրոնական հանայնքների միջեւ փոխընթանման հաստատման գործում»:

§2 Eñ ií 3 j̄ 3 Ȳ 3 eád̄ Y»ñ

Անհանդուրժողականության խնդիրը պետք է բարձրացվի թե՝ հասարակության եւ թե՝ լրատվական կառույցների կողմից: Լրատվական մասնագիտական կառույցների փորձը ցույց է տալիս, որ դրանցում պետք է հասկապնեն:

- վավերագրորեն շարադրել ռասիզմի եւ անհանդուժողականության փաստերը,
 - անձազ պատկերել համայնքների միջեւ լարված իրավիճակները,
 - խոսափել հրապարակումներում եւ ծրագրային ծառայություններում մշակութային, էթնիկ կամ կրոնական համայնքների անդամներին նևեմացնող ստերեոտիպային նկարագրություններից,
 - անհատական վարքը նկարագրելիս՝ անտեղի չկապել այն նման համայնքներին անհատի անդամակցությամբ,
 - մշակութային, էթնիկ եւ կրոնական համայնքները պատկերել հավասարակշռված եւ անկողմնակալ սկզբունքով՝ արտացոլելով այդ համայնքների տեսակենություն ու հեռանկարները,
 - հասարակությանը զգոն պահել անհամդուժողականության հետեւանքների հանդեպ,
 - խորացնել հասարակության կողմից տարբերությունների ըմբռումն ու ծիչտ գնահատումը,
 - վիճարկել հարցագրույցների, ելույթների, բանավիճային ծրագրերի եւ այլնի ընթացքում խոսնակների անհամդուժողական արտահայտությունները,

- քննել տեղեկատվության աղբյուրի ազդեցությունը հաղորդման վրա,
 - քննել լրատվական կառույցների աշխատակիցների բազմազանությունը եւ որքանով է այն համապատասխանում ընթերցողների, ունկնդիրների կամ հեռուստադիտողների բազմաթիվ, բազմամշակութային բնույթին»:

§4 i ³ n̩ . í Çi ³ YáYÝ»ñ

Այս նախաձեռնությունները եւ միջոցառումները կարող են իրականացվել տարբեր լրատվական հատվածների մշակած վարքագիր կանոնների հիման վրա, դրոնք բարձրացնում են խսդականության եւ անհամուրժողականության խնդիրները՝ խրախուսելով լրատվության մասնագետներին՝ լուրջ ավանդ ներդնելու տարբեր կրոնական, էքնիկ և մշակութային խնդիրի միջև հանդուրժողականության եւ փոխազմբանման մթնոլորտի ծեւավորման գործում»:

Հանձնարարականն էլ այս խնդրի լուծման ճանապարհը տեսնում է լրատվամիջոցների հիքնակարգավորման եւ վարչագծի կանոնների մշակման մեջ, քանզի, ինչպես արդեն նշել ենք, օրենսդրական ցանկացած միջամտություն կարող է հանգեցնել խոսրի ազատության սահմանափակումների:

III. Đප ໃຈ່າ³ ຍັງ
ດປ ຍິນ ອ້າວີ້າ ດ້າວີ້າ ຍັງ
ຸ້ນຢູ່ເມືອງ

2 յժմ անդրադասնաճք Հայաստամի ներքին օրենսդրությանը, ինչը, միանգամից ասենք, քննարկման այնքան էլ շատ նյութ չի տալիս: Բանն այն է, որ օրենսդրությունը անուղղակիորեն է անդրադառնում տարբեր փոքրամասնություններին եւ խճերին՝ տեղեկատվության ազատության առումով, այսինքն, ասենք, պատվի եւ արժանապատվության պաշտպանության հարցն ընդհանուր է եւ կարող է վերաբերել ինչպես հասարակության ցանկացած անդամի, այնպես էլ այս կամ այն փոքրամասնության կամ խոցելի խճի ներկայացուցչի:

2003 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված «Զանգվածային լրատվության մասին» օրենքն, օրինակ (7 հոդված) տալիս է ամենաընդհանուր ձեւակերպումը.

ՏԵՇԻ 3 / 7. ԵՌ Ի/ԱԺՄ ՅԱԷՆԴԱՋՄ/Ե ա՞՛Յ 3 ½ Ի/ԱԺՄ ՅՉՔ Ի ԱՇԽԾԵՅ ՀՎ ԿՅ ։ 3 Ի/ԱԺՄ/ՐԱ

1. Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձնումիւնիությունը:

2. Արգելվում է տեսաձայնագրմանը ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին գգուշացնելու, եւ այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար եւ դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաև մարդու անձնական եւ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

Այս հոդվածի՝ քրեորեն պատժելի համարվող արտահայտությունը կարելի է վերագրել նաև ռասայական անհանդուրժողականություն քարոզելուն: Իսկ անձնական եւ ընտանեկան կյանքի անձնումիւնիությունը վերաբերում է հասարակության յուրաքանչյուր անդամի:

Իսկ որո՞նք են քրեորեն պատժելի արարքները ըստ մեր օրենսդրության: Քրեական օրենսգիրքն ունի մի քանի հոդվածներ, որոնք վերաբերում են ազգային, կրոնական կամ ռասայական թշնամանք հարուցելուն, ինչպես նաև՝ զրաբարտությանն ու վիրավորանքին:

Օրենսգրքի 226 հոդվածն ասում է.

ՏԵՇԻ 3 / 226 2½ 3 ՊՐԵ 6³ Ծ 1³ Տ 1³ Ա Ի ԹԱՅՑ 1³ ՏԱՅՑ 3 ԱՅՆԲ ԹԱՅՑ»ԵԱ

1. Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները պատճվում են սուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգիարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ երկուսից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներով օգտագործելով,

2) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

3) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

4) կազմակերպված խմբի կողմից՝

պատճվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»:

Նշենք նաև զրաբարտությանը եւ վիրավորանքին վերաբերող հոդվածները, որոնք հավասարապես վերաբերում են հասարակության բոլոր անդամներին, այդ թվում, հասկանալի է, զանազան խմբերի ներկայացուցիչներին.

ՏԵՇԻ 3 / 135 ¼ 3 ԹԱՅՑԱՅՑ*

1. Զրաբարտությունը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող կամ բարի համբավն արատավորող ավմիայս սուստ տեղեկություններ տարածելը, պատճվում է սուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի հինգիարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ, պատճվում են սուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

ՏԵՇԻ 3 / 136 Ի ՉՅ Ի ԱՅ ՏԱՅ

1. Վիրավորանքը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ծեւով ստորացնելը, պատճվում է սուզանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ, պատճվում են սուզանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից ութիարյուրապատիկի չափով»:

* Քրեական օրենսգրքի 135 եւ 136 հոդվածները մեջբերվում են նոր խմբագրումներով:

Պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի պաշտպանության դրույթ ունի նաեւ ՀՅ Քաղաքացիական օրենսգիրքը, սակայն դա էլ մեծ վերապահումով միայն կարելի է վերագրել փոքրա- մասնություններին եւ խցելի խճերին:

Àeī ø³ Ó³ ū óç³ ī³ Yûñ Yē n̄c 19 Ná¹í³ íç

SEÐA¹ í 3 Í 19. ä³ ii Ç³ ñ³ Ý³ å³ ii áðAð Ý
»Ö áñ³ ñ³ ñN³ Ùm³ i Çå³ Biå³ YáðAðAðA

1. Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերթելու իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրավականությանը:

Պաղպացու պատվի են արժանապատվորյան պաշտպանությունը, շահագրդիր անձանց պահանջով, բոլոր պարունակությունը է նաև նրա մահից հետո:

2. Եթե քաղաքաբար պատիվը, արծննապատվությունը եւ գործարար համբավն արտասպարող տեղեկությունները տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա դրանք պեսոք է հերթվեն զանգվածային լրատվության նույն միջոցներով:

Եթե նշված տեղեկությունները պարունակվում են կազմակերպությունից ելնող փաստաթղթում, ապա ննան փաստաթուղթը պետք է փոխարինվի կամ հետև կանչվի:

Այլ դեպքերում հերքման կարգը սահմանվում է դատարանով:

3. Ρωμαϊκωσήν, πιλι μασιήν ζωνδράσωμήν
Ιραστψοιτειαν δηθογνόντερον ψηφιασμαρακέβη την ορισμένη
Ιραστψοιτειαν δηθογνόντερον ψηφιασμαρακέβη την ορισμένη
ποινιναχαρητην υπερβατειαν δηθογνόντερον, ιραστψοιτειαν δηθογνόντερον
ηρ ψηφιασμαρακέβη την ορισμένη ζωνδράσωμήν
Ιραστψοιτειαν δηθογνόντερον:

4. Քաղաքացին, ում մասին տպարածվել են նրա պատիկը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, իրավունք ունի այդ տեղեկությունները հերքելու հետ միասին պահանջն ի առողջությունը:

5. Τέτοια φωτιά πρέπει να γίνεται στην αρχή της ημέρας, όταν ο ήλιος έχει ανατέλει και οι θερμοκρασίες είναι στη μεγαλύτερη ποσότητα στην ημέρα. Η φωτιά πρέπει να γίνεται στην αρχή της ημέρας, όταν ο ήλιος έχει ανατέλει και οι θερμοκρασίες είναι στη μεγαλύτερη ποσότητα στην ημέρα.

